ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

14 օգոստոսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Արմինե Երիցյան, Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բադալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Շախկուլյան , Գոռ Հովվյան, Ստեփան Ասրյան , Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան, Կարինե Սիմոնյան, Արթուր Հովհաննիսյան , Արթուր Մանուկյան , Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությամբ օրակարգային հարցերին ավելացվեց 1 հարց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին **:**

Համայնքի ավագանին կողմ քվեարկեց:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ

օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի օգոստոսի 14 -ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու՝ 15.07.2020թ-ի թիվ 55-Ա որոշման 4-րդ կետը անվավեր ճանաչելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 1-ին փողոց, 86 հասցեում գտնվող, կադաստրային 06-112-0209-0532 ծածկագրով 1.6566 հա մակերեսով հողամասից առանձնացվող 0.36833 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 21/1 հասցեում հողամասեր օտարելու մասին.

1.6 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15.07.2020Թ-Ի ԹԻՎ 55-Ա ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ ԿԵՏԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով 19.07.2024 թվականին կազմված թիվ 1 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 38-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Անվավեր ճանաչել և վերացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 15.07.2020թ-ի թիվ 55-Ա որոշման 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասին հակասելու հիմքով:
2.Հանձնարարել և լիազորել Ալավերդի համայնքի ղեկավարին՝
2.1 Անվավեր ճանաչել և վերացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 15.07.2020թ-ի թիվ 55-Ա որոշման 4-րդ կետի հիմքով Ախթալա համայնքի ղեկավարի կողմից 31.08.2020թ-ին կայացրած թիվ 163-Ա որոշումն ու ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Շամլուղ քաղաք հասցեում գտնվող թիվ 06-005-0306-0026 ծածկագրով 1,0 հա հողամասի աճուրդ-վաճառքի հիմք հանդիսացած բոլոր իրավական ակտերը:
2.2 Սույն որոշման 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանված հանձնարարությունը կատարելուց հետո, սեղմ ժամկետներում, դիմել Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ օրենքի խախտմամբ այլ անձի անունով գրանցված իրավունքի պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականությունը գրանցելու նպատակով:
2.3 Կադաստրի կոմիտեի կողմից հողամասի նկատմամբ այլ անձի անունով գրանցված իրավունքի պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականությունը գրանցելու դիմումը մերժելու դեպքում՝ Ալավերդի համայնքի իրավունքների պաշտպանությունն իրականացնել դատական կարգով:
2.4 Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93 - Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27. 1-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 86 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0209-0532 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.6566 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ 0.36833 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառարավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի 13052019-06-0003 վկայականը, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 16.07.2024թ. թիվ 34 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 1-ին փողոց, 86 հասցեում գտնվող, քաղաքացի Անահիտ Սոսի Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-112-0209-0532 ծածկագրով, 1.6566 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից առանձնացվող՝ 0.36833 հա մակերեսով հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Անահիտ Սոսի Շահինյանին պարտավորեցնել վճարել սեփականության իրավունքով իրեն պատկանող, 0.36833 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 21/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» ՀայաստանիՀանրապետությա նօրենքի 18-րդհոդվածի 21-րդկետիդրույթներով, Հողային օրենսգքրի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 12072024-06-0038 վկայականը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

11. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 21/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0423 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0006 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել 50 000 (հիսուն հազար)ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար ՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտայինօբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին՝

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով,Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 02.10.2024թ. N 1169-Ա, 21.03.2024թ. N 509-Ա, 07.02.2024թ. N 285-Ա, որոշումները, սեփականության իրավունքի N 12072024-06-0031 (գաղտնաբառ՝ RCCNZFGBYLQJ), N 19072024-06-0057 (գաղտնաբառ՝ NRTNSBEB1QBD) և N 25072024-06-0012 (գաղտնաբառ՝ WA7GNL7VVFNX) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ ***Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց, 2/6 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 02.10.2024թ. N 1169-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 3.0 քմ արտաքին մակերեսով կրպակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00042 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0422/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել «ԼԻԼՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիպյան փողոց, 6/23 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 21.03.2024թ. N 509-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 98.25 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0057 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0054-0085/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արման Կառլենի Մաթոսյանին:
3. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Մարտի 8-ի փողոց, 11 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի07.02.2024թ. N 285-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 42.8 քմ արտաքին մակերեսով անավարտ բնակելի տունը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00469 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0015-0024/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արարատ Վեյսարի Մանուկյանին:

4. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 97-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալավերդի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է 98-Ա/

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐՈՍՅԱՆ

ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՌԱՄԱՋՅԱՆ

ՍԵՆԻԿ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՏԵԼԵՄԱԿ ԱՂՎԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ՌԱՄԱՋՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____